

դառնան ի հարաւ եւ հային եւ գոչեն ասելով .
 205 Եկ Մեսիա թագաւոր Իսրայէլի : Եւ անտի
 դնացեալ ի բլուր մի , յորմէ Երուսաղէմ քա-
 ղաքն երեւէր . զոր տեսեալ Սողոմոնի տա-
 ճարն փառաւոր եւ սուրբ զՅարութեան խու-
 պան՝ ուրախացեալ բերկրեցաք , մինչ զի ի
 210 խնդութենէ անտի լացի . եւ առժամայն ան-
 կեալ ի վերայ երեսաց խոց՝ երկրպագի սուրբ
 տնօրինականացն եւ գոհացայ զԱստուծոյ , որ
 արժանի արար զանարժան ծառայս տեսանել
 զսուրբ քաղաքն աստուածակոխ :

12. ԵՐՈՒՍԱՂԷՄ

ԺԱՄԱՆՈՒՄՆ

Անտի տվի զձիս աղքատի մի ծերունի .
 եւ ես մինչ ի քաղաքն հետիտաս գնացի : Կայ
 սահմանք զի յորժամ մերձ լինին սրբոյ Երու-
 սաղէմայ ուխտաւորքն՝ առաջնորդն մարդիկ
 5 ուղէ դէմ նոցա . թէ կան եպիսկոպոսք , վար-
 դապետք՝ եւ նա ուղէ եպիսկոպոսք եւ վար-
 դապետք . եւ թէ միայն քահանայք եւ աշխար-
 հականք են , առաքէ զմեծ թարձիմանն եւ քա-
 հանայք դէմ նոցա : Իսկ ամենայն ուխտ եկե-
 10 ղեցւոյն զարդարին եւ զգեստաւորին՝ եպիս-
 կոպոսք , վարդապետք , քահանայք . եւ ամե-
 նայն կղերիկոսք , ջահիւք եւ լապտերօք ,
 բուռվարօք եւ խաչալամով , խնկօք եւ մոմե-
 ղինօք դէմ դնան : Եւ որչափ քահանայ կայ եւ

208 զարութեան :

4 մարդիք : — 8 դարձիման : — 10 եպիսկոպոս :